

ԲԱՆԱԼԻ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Կ Ա Մ

ԽՆԴՐԱՅ ԼՈՒՇՄՈՒՆՔՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՔՆ

ՊԱՏԿԱՆԻ ԽՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ



ԱՇԽԱՏԱՆՈՒԹԵԱՆ

ՏԻԳՐԱՆՑ ԳՕԶԱՃԵԱՆ

معارف فطانت جلد سنك ١٧٧ نمرولى رخصتنامه سیه طبع اولت شعور



Կ. ՊԵՂԻՈՒ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Ճ. ԱՐԱՄԵԱՆ

1894



20
519

20
519

6

6



51(075)

51(075)

ԲԱՆԱԼԻ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԿԱՐ

ԽՆԴՐՈՅ ԼՈՒԾՄՈՒՆՔՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔՆ

ՊԱՏԿԱՆԻ ԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ



ԱՇԽԱՏԱՍԻՐՆԱՑ

ՏԻԳՐԱՆ Յ ՊՕԶԱՃԵԱՆ

معارف نظارت جلیه سنک ۱۷۷ نمرولی رخصتنامه سیله طبع او


33183



Կ. ՊՕԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ ՊԱԼԵՆՑ

1894



Հ. յարմար Կարգադրութիւն


ԲՕՆԱԼԻ

3 մայ. 20 Հ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԿԱՄ

ԽՆԴՐՈՑ ԼՈՒԾՄՈՒՆՔՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ



ԿԱՐԴԱԼ ՇԵՏԵՒԵԱԼ ԹԻՒԵՐԸ

1. Խննսուն և չորս :
2. Եօթանասուն :
3. Հարիւր երեսուն և վեց :
4. Երկու հարիւր յիսուն և ութ :
5. Երեք հարիւր քառասուն և եօթն :
6. Չորս հարիւր վեց :
7. Հինգ հարիւր յիսուն :
8. Ութ հարիւր վաթսուն :
9. Ինն հարիւր :
10. Երկու հարիւր քսան երկու :
11. Հազար եօթն հարիւր երեք :
12. Քառասուն և հինգ հազար, ինն հարիւր երկու :
13. Երեք հարիւր չորս հազար, ութ հարիւր իննսուն և եօթն :
14. Յիսուն և ութ միլիոն, երեսուն և հինգ հազար, հարիւր քառասուն :
15. Քառասուն միլիոն, չորս հազար :
16. Հինգ միլիոն, հինգ հազար :
17. Ութ երկիւիոն, երեսուն և չորս միլիոն, հինգ հարիւր հազար, եօթն հարիւր,

18. Չորս երկիւիոն, հարիւր յիսուն միւիոն, քառասուն և հինգ հազար, ինն հարիւր մէկ:

19. Հարիւր քսան երեք միւիոն, չորս հարիւր յիսուն և վեց հազար, եօթն հարիւր ութսուն և ինն:

20. Եօթն հարիւր քառասուն և մէկ միւիոն, հինգ հարիւր երկու հազար, ութ հարիւր:

21. Ութ եռիւիոն:

22. Յիսուն երկիւիոն, վաթսուն երեք միւիոն, հարիւր յիսուն հազար, տասն և ութ:

23. Տասն երկիւիոն, քսան միւիոն, երեսուն և չորս հազար, հինգ հարիւր վաթսուն և եօթն:

24. Ութ եռիւիոն, եօթն երկիւիոն, վեց միւիոն, հինգ հազար չորս:

25. Վեց երկիւիոն, եօթն հարիւր քառասուն միւիոն, հարիւր յիսուն և ինն հազար:

26. Իննսուն և մէկ եռիւիոն, չորս հարիւր յիսուն երկիւիոն, երեք միւիոն, վեց հարիւր քսան և հինգ:

ՀԵՏԵՒԵԱԼ ԹԻՒԵՐԸ ԹՈՒԱՆՇԱՆՆԵՐՈՎ ԳՐԵԼ

27.	763:	37.	9415003:
28.	805:	38.	7003502:
29.	230:	39.	485001460:
30.	470:	40.	71580000:
31.	1590:	41.	10000300:
32.	825:	42.	87418359235:
33.	6042:	43.	8045008907415:
34.	48015:	44.	4000004000004:
35.	103250:	45.	40000040000040:
36.	9999:		

46. 24. 134. 666. 1274. 19. 2021.
 47. 841. 4444. 301. 362. 3003. 3064.
 48. 318.
 49. 451.
 50. 14, 1638, 1643, 1715, 77, 72.

51. ԻԸ. ԼԶ. ՀԵ. Ճ. ՄԼԳ. ՆԱ. ՇԸ. ՈԼ.
 52. ՌՅԻԸ. ՍՂԳ. ՑԵ. ԻՅԼԳ. ՑՈԿԶ.
 53. ՌՊՀ.
 54. ՌՆՂԲ.

55. 458. 893. 6849. 3738. 9899.
 56. 1672. 1521. 10451. 10243. 9808.
 57. 12418. 19725. 14337. 12929. 14201.

Խ Ն Դ Ի Բ Ժ Ե Ա Ն Ի Ե Լ Մ Ա Ն

58. Իրաւու վրայ զսւմարելով կ'ունենամք.
 $14 + 27 + 35 + 50 + 126.$

Պ. 126 աշակերտ.

59. Պ. 1510449000 է երկրիս բազմամարդութիւնը.

60. Պ. 1327 ծառ կայ պարտէղին մէջ.

61. 57 ը 1838 ին վրայ գումարելով կը լինի 1895.

Պ. 1895 թուականին.

62. Պ. 6940 զըշ. է բոլոր պարտքը.

63. Ա. գործաւորն առաւ 53.

Բ. ը Ա. էն 16 աւելի, կ'ընէ $53 + 16 = 69.$

Գ. ը առջի երկուքէն 10 աւելի, կ'ընէ $53 + 69 + 10 = 132.$

Եւ գումարը կ'ընէ $53 + 69 + 132 = 254.$

Պ. Բ. ը 69. Գ. ը 132. Գումարն է 254 զըշ.

64. Հետեւի գումարներն ընկոյ է,

Ա. անգամ	12	or	48	մէթրո	240	դր2.
Բ. »	8	»	32	»	160	»
Գ. »	6	»	25	»	124	»
			<u>26</u>	<u>105</u>	<u>524</u>	

Պ. 26 օր աշխատեցաւ. **105 մէթր գործեց.**
524 դր2 առաւ.

65. Ամենէն փոքրին տարիքն է **7. Բ. ք** անկէ **3 տարի** աւելի լինելով կը լինի $7+3=10$. **Գ. ք** Բ. էն **2 աւելի** կամ $10+2=12$. **Դ. ք** Գ. էն **4 տարի մեծ** կամ $12+4=16$. **Հօրը տարիքը բոլոր տղայոց չափ, կամ** $7+10+12+16=45$. **մօրը տարիքը վերջի երեք տղայոց չափ, կամ** $10+12+16=38$.

Պ. 7. 10. 12. 16. հայր 45. մայր 38.

66. Պ. 68980 ղուրուշի:

67. Պ. Ա. ք առաւ	1280	դր2
» Բ. ք 360 դր2. աւելի կամ $1280+360$. . .	1640	»
» Գ. ք 590 » » Բ. էն կամ $1640+590$	2230	»
» Շահած ստակնին է	<u>5150</u>	»

68. Պ. 59010:

69. Պ. 23699 ղուրուշի:

70. Նշանակեալ թիւերն իւրաքու վրայ գումարելով կը գտնուի,
 $2263+3463+1892=7318$.

Պ. 7318 տարի է:

71. 530 ֆրանք աւելի գնով վաճառելու է, կամ,
 $3215+530=3745$.

Պ. 3745 ղուրուշի:

72. =Պ. 62 տարեկան:

73. Հեռացան Լրկու թուոց գումարին չափ, կամ,
 $7230+5308=12538$.

24. 12538 մէթր հեռացան իրարմէ:

24. Պ. Հօրը-տարիքն է $16 + 32 = 48$.

25. Պ. Նոյնպէս հօրը տարիքն է $16 + 32 = 48$.

26. Պ. Վաճառեց $38500 + 2640 + 4860 = 46000$ ղր2.

27. Պ. Ա. տարին հնձեց $542 + 254 + 180 = 973$ գրիւ.

» Բ. » » $973 + 84 = 1057$ գրիւ.

» Ընդամենը » $973 + 1057 = 2030$ գրիւ.

28. 327. 2025. 3541. 3002. 2104.

29. 165. 3418. 2989. 338. 3673.

30. 449. 1455. 1592. 12877. 23656.

31. 2701. 43667. 30967. 38018. 26967.

32. 624. 895. 199. 1086. 70.

Ի Ն Դ Ի Ր Ք Բ Ա Ր Զ Մ Ա Ն

33. Պարսքէն զճարածը պիտի հանեմք.

$34318 - 18935 = 15383$.

Պ. 15383 ղր2. պարտքը մնաց.

34. Պ. Ապրեցաւ $1821 - 1769 = 52$ տարի.

35. Պ. Ծնած էր $1855 - 84 = 1771$ ին.

36. Որդին հօրմէն 26 տարի պակաս է. արդ հայրը
58 տարեկան լինելով, որդին պիտի լինի $58 - 26 = 32$.

Պ. 32 տարեկան կը լինի որդին.

37. Երկու թուականաց տարբեր թիւը պիտի գտնեմք.

$1892 - 1453 = 439$.

Պ. 439 տարի է.

38. Հինգ թուանշանէ բաղկացեալ ամենէն փոքր

Թիւն է 10000, ուսկէ եթէ 1894 պահսեցնեմք կու-
նենամք,

$$10000 - 1894 = 8106 \text{ մնացորդ,}$$

Պ. 8106 մնացորդ.

89. Պ. 7711 զրշ. պարտք կը մնայ.

90. Բարձման փորձով սորվեցանք որ երբ տարբե-
րութիւնը մեծ թիւէն հանեմք, փոքր թիւը կը մնայ.
արդ՝ փոքր թիւը անծանօթ լինելով տարբերութիւնը՝
847 ը, մեծ թիւէն՝ 1890 էն կը հանեմք,

$$1890 - 847 = 1043.$$

Պ. 1043 է փոքր թիւը.

91. 1335 էն 827 զրշ. պակաս ունի, ուրիմս,

$$1335 - 827 = 508.$$

Պ. 508 զրշ. ունի.

92. 2825 զրուշի վաճառեցինք որոյ մէջ է 367 զրշ.
շահը, ուրեմն եթէ 367 ը 2825 էն հանեմք, գնած
գներնիս կ'ելնէ,

$$2825 - 367 = 2458.$$

Պ. 2458 զուրուշի գներ էինք.

93. Երկու Թուոց հարգերութիւնը կը պահանջուի,

Պ. 20660 մէթը է.

94. Ուշափ որ այժմ պակաս է, նոյնչափ աւելցնելու է,

$$5200 - 3754 = 1449.$$

Պ. 1449.

95. 1892 էն 1454 տարի առաջ ինչ թուական էր.
այն կը պահանջուի, պիտի հանեմք,

$$1892 - 1454 = 444.$$

Պ. 444 թուականին.

96. Վ. 1165800 փարսախ է տարբերութիւնը,

97. Վ. 2354900 է տարբերութիւննին,

98. Իւրաքանչիւրին զիւսի թուականը 1892 էն պիտի հանեմք,

Պ. Տպագրութեան	զիւսը	1892—1436=	456	արի է.
» Ամերիկայի	»	1892—1492=	400	» »
» Շանճարգելի	»	1892—1753=	139	» »
» Շոգեշարժ մեքենայի	»	1892—1799=	93	» »
» Երկամուղւոյ	»	1892—1831=	61	» »
» Ելեքտրական հեռագրի	»	1892—1832=	60	» »

99. Վ. 23.

104. Վ. 47.

100. Վ. 29.

105. Վ. 173.

101. Վ. 45.

106. Վ. 70.

102. Վ. 53.

107. Վ. 105.

103. Վ. 29.

108. Վ. 1299.

ԽԱՌՆ ԽՆԴԻՐԲ ՅԱԻԵԼՄԱՆ ԵՒ ԲԱՐՁՄԱՆ

109. Պարտքէն պիտի հանեմք վճարածները,

Վճարածներն են $430 + 1350 + 6000 + 960 = 8740$ զր2.

Պ. Պարտք մնաց $14740 - 8740 = 6000$ զր2.

110. 2542 զր2. պարտք ունի՝ 4856 զր2. վճարելէն
յետոյ, ըսել է թէ առաջ 4856 ալ աւելի պարտք ունէր,
ուրեմն պէտք է գումարել,

$2542 + 4856 = 7398.$

Վ. 7398 զր2. էր պարտքը.

111. 61640 զուրուշի վաճառելով 6551 զր2. փաս-
քաւ, ըսել է թէ ինք 61640 զուրուշէն 6551 զր2. ա-
ւելի գնով գնեց էր, ուրեմն պէտք է գումարել,

$61640 + 6551 = 68191.$

Պ. 68191 զուրուշի գներ էր:

112. Պ. Մեռաւ 1761+84=1845 թուականին:

113. Թաժնուած 15800 էն պիտի հանեմք երեք հոգիին առածները. երեք հոգիին առածները կ'ընեն,
 $5600+3400+1800=10800$.

Պ. Դին մնաց $15000-10800=5000$ զրշ:

114. 1835 ին տեւնուելով 76 տարի անտեսանելի մնացեր է, ըսել է թէ մէյ մը 1835 էն 76 տարի առաջ երեւցեր է մէյ մ'ալ 1835 էն 76 տարի յետոյ պիտի երեւի. ուրեմն մէյ մը 76 ը 1835 էն հանեմք իմանալու համար թէ երբ անկէ առաջ երեւցեր է. մէյ մ'ալ 76 ը 1835 ին վրայ գումարեմք իմանալու համար թէ երբ պիտի երեւի:

Պ. երեւցած է $1835-76=1759$ ին.

Պ. Պիտի երեւի $1835+76=1911$ ին.

115. Նրիւ Թւոց ճարքերութեանը չափ.

ճարքերութիւնն է $2340-1764=576$.

Պ. 576 գումարելու է:

116. 1764 էն թիւ մը հանուելով 893 մնացեր է, Յայտնի է որ մնացորդը մեծ թիւէն հանելով փոքր թիւը կ'ստացուի. ուրեմն.

$1764-893=871$.

Պ. 871 հանելու է:

117. 1764 ը մեծ թիւէ մը հանելով 1261 մնացեր է, Յայտնի է որ փոքր թիւը և մնացորդը գումարելով մեծ թիւը կ'ստացուի. ուրեմն,

$1764+1261=3025$.

Պ. 3025 էն հանելու է:

118. 100 օխա ալիւրին մէջ կը մնայ $57 - 22 = 35$
օխա ջուր. նաեւ 2 օխա աղը, ուրեմն կը լինի $100 + 35 + 2 = 137$ օխա հաց:

Կամ, 100 օխա ալիւրին մէջ 57 օխա ջուր և 2 օխա աղ գրուելով, կը լինի $100 + 57 + 2 = 159$ օխա խմոր, որմէ 22 օխան շոգ խանալով կը մնայ,
 $159 - 22 = 137$.

Պ. 137 օխա հաց կը շինուի:

119. Եթէ 25 զրշ. պակաս ունենամ ունեցած պիտի լինիմ 546 զրշ. պարտքս վճարելու ստակ, նաեւ 17 զրշ. ալ քովս աւելցածը, կամ $546 + 17 = 563$ զրշ. հիմա 25 ալ աւելի ունիմ, ուրեմն,
 $563 + 25 = 588$.

Պ. 588 զրշ. ունիմ:

120. Ա. ը առաւ 12500.

Բ. ը Ա. էն 7300 պակաս, կամ $12500 - 7300 = 5200$

Գ. ը Բ. էն 1475 աւելի. կամ $5200 + 1475 = 6675$

Երեքին առածն է $12500 + 5200 + 6675 = 24375$

Ուրեմն Դ. ին առածն է $30000 - 24375 = 5625$.

Պ. Բ. ը առաւ 5200. Դ. ը 6675. Դ. ը 5625 զրշ.

121. Պ. 82337 զուրուշ:

122. Ա. արկղին մէջ կայ 240 նարինջ.

Բ. ին մէջ 80 աւելի, կամ $240 + 80 = 320$ նարինջ.

Երկուքին մէջ եղածն $240 + 320 = 560$ նարինջ:

Գ. ին մէջ եղածն զանելու համար երկուքին մէջ եղած 560 ը 1435 էն կը հանեմք.

Դ. արկղին մէջ կայ $1435 - 560 = 875$.

Պ. 875 նարինջ կայ Դ. արկղին մէջ:

123. Եթէ 500 զրշ. աւելի ունենամ ունեցած պիտի լինիմ 1200 զրշ. պարտքս վճարելու ստակ, նաեւ 52 զրշ. ալ քովս մնացածը, կամ $1200 + 52 = 1252$ զրշ. հիմա 500 պակաս ունիմ, ուրեմն,

$$1252 - 500 = 752.$$

Պ. 752 զրշ. ունիմ.

124. Եթէ 142. զրշ. աւելի բարձր գնով վաճառէր 1000 զրշ. պիտի շահէր, իսկ հիմա շահեր է 1000—142 = 858 զրշ. զոր վաճառած գինէն կը հանեմք գնած գինը գտնելու համար. $2858 - 858 = 2000$.

Կամ եթէ 142 զրշ. աւելի բարձր գնով վաճառէր վաճառած պիտի լինէր $2858 + 142 = 3000$ զրշ. ուսկէ 1000ը շահ պիտի լինէր, ուրեմն ինք գներ է $3000 - 1000 = 2000$.

Պ. 2000 զրշի գներէ.

125. Եթէ 20 զշ. աւելի գնով վաճառէի 30 կը շահէի, ուրեմն հիմա շահեր եմ $30 - 20 = 10$ զրշ. հետեւաբար վաճառեր եմ $350 + 10 = 360$.

Պ. 360 զրուշի վաճառեցի.

126. 470 զրուշէն 190 զրշ. փոխ տալով, քովը մնաց, $470 - 190 = 280$ զրշ. որն որ պարտքին տուաւ, ուրեմն,

$$1100 - 280 = 820.$$

Պ. 820 զրշ. պարտքը մնաց.

127. Պ. $481 - 15 = 466$ թուական ծննդեան.

» $511 - 466 = 45$ տարեկան էր մեռած ատեն.

» $1892 - 481 = 1411$ տարի է.

128. Տարւոյն մէջ չգործած օրերն են,

$$52 + 13 + 28 = 93.$$

Պ. Ուրեմն պիտի աշխատի $365 - 93 = 272$ օր:

129. Եթէ հնար լինէր 2598ը 1845էն պիտի հանէինք, պատասխանը պիտի լինէր Քրիստոսի այնքաներորդ թուականը, բայց չենելուն՝ կը հասկցուի թէ Քրիստոսէ առաջ հիմնուած է. արդ՝ 1845 ը 2598 էն կը հանեմք.

$$2598 - 1845 = 753.$$

Պ. 753 տարի Քրիստոսէ առաջ հիմնուած է.

130. Միւսնոյն կողմ երթալով հեռաւորութիւննին երկու թուոց տարբերութիւնը պիտի լինի, ուրեմն,

$$8340 - 6085 = 2255.$$

Պ. 2255 մեթր հեռացան իրարմէ.

131. Հակառակ կողմ երթալով հեռաւորութիւննին երկու թուոց գումարը կը լինի (Խ 73) ուստի.

$$8340 + 6085 = 14425.$$

Պ. 14425 մեթր պիտի հեռանային իրարմէ.

132. Պ. 1⁰. Ա. դասը 15. Բ. ը 24. Գ. ը 34. Դ. ը 46.

» 2⁰. Տակաւին կրնայ ընդունուիլ 34 աշակերտ.

133. Պ. 384 մեթր բարձր է.

134. Որովհետեւ 11500 զրուշ արժող պարտէզ մը գնելու համար 1020 զրշ. կը պակսի, ուրեմն Խաչիկին ունեցածն է, $11500 - 1020 = 10480$ զրշ. Փոքր պարտէզը գնելով 875 զրշ. ն աւելցաւ, ըսեմ է թէ փոքր պարտէզի գինն է,

$$10480 - 875 = 9605 \text{ զրուշ.}$$

Պ. 9605 զրշ. է փոքր պարտէզի գինը.

135. Մեծ եղբայրը 10025 զրշ. առած լինելով փոքր եղբոր կը մնայ 18040—10025=8015 զրուշ.

3466 զրշի. ապրանք գնելով քովը կը մնայ,
8015—3466=4549 զրշ.

դ. 4549 զրշ. մնաց փոքր եղբոր քով.

136. դ. 46.

145. դ. 324360.

137. դ. 670.

146. դ. 444.

138. դ. 2684.

147. դ. 3040.

139. դ. 435.

148. դ. 47892.

140. դ. 4042.

149. դ. 446664.

141. դ. 2085.

150. դ. 4620.

142. դ. 3048.

151. դ. 7056.

143. դ. 47311.

152. դ. 234525.

144. դ. 36712.

153. դ. 960.

158. դ. 468600.

154. դ. 22800.

159. դ. 4397200.

155. դ. 429000.

160. դ. 465000.

156. դ. 33400.

161. դ. 369000.

157. դ. 708000.

162. դ. 7280000.

163. դ. 4945.

166. դ. 32472.

164. դ. 44770.

171. դ. 740335.

165. դ. 33887.

172. դ. 2420909.

166. դ. 447708.

173. դ. 6679824.

167. դ. 4432644.

174. դ. 46203608.

168. դ. 3468264.

175. դ. 265254387.

169. դ. 4997472.

176. դ. 2892310528.

177. Պ. 60.	182. Պ. 45100000.
178. Պ. 900.	183. Պ. 279000000.
179. Պ. 49000.	184. Պ. 88683000.
180. Պ. 450000.	185. Պ. 1867600000.
181. Պ. 1944000.	186. Պ. 4628000000.

187. Պ. 1694152.	188. Պ. 1022084710.
188. Պ. 17890728.	191. Պ. 3718520520.
189. Պ. 140842240.	192. Պ. 36941300307.

ԵՆԴԵՐԺ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԵԱՆ

193. Պ. 2. 6. 24. 420. 720. 5040. 40320. 362880.

194. Մէկ կանգունը 53 զրշ. ընկալ 37 կանգունը պիտի ընէ,
 $53 \times 37 = 1961$.

Պ. 1961 զրշ.

195. Պ. 536 զրշ.

196. Տարին 12 ամիս լինելով 350 ը 12ով պիտի բազմապատկուի,

$$350 \times 12 = 4200.$$

Պ. 4200 զրշ. կ'ընէ տարեկանը.

197. Տարին 365 օր լինելով 18ը 365ով պիտի բազմապատկուի,

$$18 \times 365 = 6570.$$

Պ. 6570 զրշ.

198. Մէկ ծառային ամսականը 600 լինելով,

եօժն ծառային կուտայ ամսական $600 \times 7 = 4200$

» » » տարեկան $4200 \times 12 = 50400$

Պ. 4200 զրշ. ամսական կուտայ ամենուն,

» 50400 » տարեկան » » »

199. Մէկ ծրարը 60 արշըն լինելով՝ 5 ծրարը կ'ընէ
 $69 \times 5 = 300$ արշըն

Մէկ արշընը 58 զրշ. քնելով՝ 300 արշընը գլխի ընէ
 $300 \times 58 = 17400$ զրշ.

դ. 17400 զրշ. վճարելու է:

200. Պ. Մկ ժամու մէջ կը դառնայ $50 \times 60 = 3000$ անգամ
 » Մէկ անուր » » $3000 \times 24 = 72000$ »

201. Պ. 2936400 տրամ:

202. Պ. 126000 օխա:

203. Պ. 7348 օխա:

204. Պ. Մինչեւ 1893 տարւոյն սկիզբը որ 1892 ամ-
 բող տարի է կը բաղմապատկեմք 365 ով,

դ. $1892 \times 365 = 690580$ օր,

դ. $690580 \times 24 = 16573920$ ժամ:

205. Եթէ մէկ ձին մէկ օրը 7 քիլոկրամ ունէ, տարին կ'ուսէ
 $365 \times 7 = 2555$ քիլոկրամ,

եթէ մէկ ձին տարին 2555 քիլո ունէ 8 ձի կ'ուսեն
 $2555 \times 8 = 20440$ քիլո,

Կամ. եթէ մէկ ձին մէկ օրը 7 քիլո ունէ 8 ձի կ'ուսեն
 $8 \times 7 = 56$ քիլո.

Եթէ մէկ օրը 56 քիլո ուսեն, տարին կ'ուսեն
 $365 \times 56 = 20440$ քիլոկրամ.

Եթէ մէկ ձին օրը 2 խուրձ ուսէ 8 ձի կ'ուսեն
 $8 \times 2 = 16$ խուրձ, եւ տարին կ'ուսեն $365 \times 16 = 5840$
 խուրձ: Մէկ խուրձը 2 զրշ արժեւելով կ'ընէ,

$5840 \times 2 = 11680$ զրուշ:

դ. 20440 քիլոկրամ խոտ պէտք է:

» 11680 զրշ. ծախք կը լինի:

206. Մէկ օրը 120 մեթր հնձելով 6 օրը կը հնձէ
 $120 \times 6 = 720$ մեթր, 15 մարդիկ կը հնձեն՝

$$720 \times 15 = 10800 \text{ քւ. մետր.}$$

կամ. 15 գործաւոր մէկ օրէն կը հնձեն $120 \times 15 = 1800$
 մեթր, 6 օրէն կը հնձեն՝ $1800 \times 6 = 10800$ քւ. մեթր:

Պ. 10800 քւ. մեթր կրնան հնձել:

207. Մէկ հասորը 25 թերթ լինելով՝

$$4 \text{ հասորը կ'ընէ } 25 \times 4 = 100 \text{ թերթ.}$$

$$\text{Պ. } 100 \times 16 = 1600 \text{ երես.}$$

$$\text{» } 1600 \times 34 = 54400 \text{ տող.}$$

$$\text{» } 54400 \times 40 = 2176000 \text{ գիր.}$$

208. 2 շաբաթ՝ 4 օր՝ 5 ժամ՝ 25 վայրկեանը ամենը
 վայրկեան կընեմք կը լինի 26245 վայրկեան. եթէ բազ-
 կերակը մէկ վայրկեանի մէջ 65 անգամ զարնէ 26245
 վայրկեանի մէջ պիտի զարնէ, $26245 \times 65 = 1705925$.

Պ. 1705925 անգամ կը զարնէ:

209 Եթէ 8 հոգի 23 օրէն շինեն, մէկ հոգին 8 ան-
 գամ 23 օրէն պիտի շինէ. որովհետեւ ինքն իրեն հա-
 մար 23 օր պիտի աշխատէր արդէն, այժմ 23 օր ալ
 պիտի աշխատի իր մէկ ընկերին համար, 23 օր ալ միւս
 ընկերին համար, եւ այսպէս 8 անգամ 23 օր պիտի
 աշխատի, $23 \times 8 = 184$.

Պ. 184 օրէն կրնայ շինել մէկ հոգին:

210. Պ. 49 մարդ պէտք է:

211. Եթէ 36 գործաւոր 14 օրէն լմնցնեն՝ մէկ գոր-
 ծաւորը պիտի լմնցնէ $36 \times 14 = 504$ օրէն. մէկ օրն ալ
 10 ժամ է, պիտի լինի $504 \times 10 = 5040$.

Պ. 5040 ժամէն:

213. Յայտնի է որ սենեակը երկու երկայնութիւն և երկու լայնութիւն ունի. երկայնութիւնները կ'ընեն $18 \times 2 = 36$. լայնութիւնները կ'ընեն $15 \times 2 = 30$. ասոնց գումարը կ'ընէ $36 + 30 = 66$.

Պ. 66 ոտք կ'ընէ բոլորակը:

213. Երկայնութիւնը լայնութեամբ բազմապատկեմք,
 $18 \times 15 = 270$ քառակուսի ոտք

Պ. 270 քառակուսի ոտք:

214. **Պ. 270** $\times$ **14** = **3780** խորանարդ ոտք:

215. **Պ. 4** $\times$ **3** $\times$ **5** = **60** խոր կանգուն է պարունակութիւնը.

» $210 \times 60 = 12600$ օխա ջուր կը պարունակէ:

216. **Պ. 2** $\times$ **36** $\times$ **4** = **288** օխա բուրգ:

» $288 \times 9 = 2592$ շրշ:

217. Մէկ օրը կ'ընէ $24 \times 60 = 1440$ վայրկեան:

Պ. 1440 $\times$ **11** = **15840** օխա ջուր:

218. **Պ. 1^o.** Մէկ շրջանակը $360 \times 60 = 21600$ մաս է:

» **2^o.** Մէկ աստիճանը $60 \times 60 = 3600$ մանրամաս է:

» **3^o.** Մէկ շրջանակը $21600 \times 60 = 1296000$ մանրամաս է:

219. **Պ. 360** $\times$ **25** = **9000** հասարակ փարսախ է:

» $360 \times 20 = 7200$ ծովային » »

220. **Պ. 4444444** երկվայրկեան:

221. 4 սարին 365 ական օրէն, կընէ 1460 օր

2 » 366 » » » 732 »

4 ամիսը 31 » » » 124 »

3 » 30 » » » 90 »

1 » 28 28 »

2448 օր

2448 օր 24 ով բազմապատկելով 58752 ժամ

58752 ժամ 60 ով » 3525120 վայրկեան

3525120 վայր. 60 ով » 211507200 երկվայրկեան :

Պ. 211507200 երկվայրկեան:

222. 2 ժամ 17 վայրկեանը կընէ,
 $2 \times 60 + 17 = 137$ վայրկեան,
 Շողեկառւըը կընայ երթալ ուրեմն,
 $850 \times 137 = 116450$ մէթր:

Պ. 116450 մէթր:

223. Պ. Սնդիկը օդէն $775 \times 14 = 10850$ անգամ ծանր է:

224. Պ. Ոսկին օդէն $775 \times 19 = 14725$ անգամ ծանր է:

225. Մէկ երկվայրկեանէն 340 մէթր ընթանալով՝ 14 երկվայրկեանէն կ'ընթանայ, $340 \times 14 = 4760$.

Պ. 4760 մէթր հեռի է:

226. Պ. 2816. **233.** Պ. 3512.

227. » 585. **234.** » 3568 մնացորդ 3.

228. » 2604. **235.** » 5883 » 4.

229. » 1265. **236.** » 1233442 » 4.

230. » 3044. **237.** » 1143451.

231. » 2940. **238.** » 178449 մնացորդ 6.

232. » 1824. **239.** » 98765432.

240. Պ 60 մնացորդ 59. **244.** Պ. 274 մնացորդ 3.

241. » 82 » 4. **245.** » 145 » 6.

242. » 67 » 400. **246.** » 874.

243. » 897 » 4457. **247.** » 159 մնացորդ 870.

248. Պ. 364. **254.** Պ 5800. **260.** Պ 1469.

249. » 253. **255.** » 6498. **261.** » 2453.

250. » 4614. **256.** » 1504. **262.** » 334.

251. » 4375. **257.** » 18825. **263.** » 5613.

252. » 2985. **258.** » 4997.

253. 7234. **259.** 10880



Խ Ն Դ Ի Դ Թ Բ Ա Ժ Ա Ն Մ Ա Ն

264. Եթէ 18 մէթրը 306 շրշ. արժէ՝ մէկ մէթրը 18 անգամ նուազ կ'արժէ, 306ը 18ով պիտի բաժնեմք,
 $306:18=17$.

Պ. 17 շրշ. կ'ընէ մէկ մէթրը.

265. Պ. Մէկ մարդուն կ'իյնայ $5274:9=586$ շրշ.

266. Պ. Ամսականը կը լինի $6480:12=540$ շրշ.

» Օրականը կը լինի $540:30=18$ շրշ.

267. Պ. 1035186 շրշ. կ'իյնայ ամեն մէկուն.

268. Պ. 18 շրշ. կը լինի օրականը.

269. Առաջարկեալ թիւերը 100 ով պիտի բաժնուին.
 Երբ 1492ը 100 ով բաժնեմք կ'ունենամք 14 քանորդ
 և մնացորդ մը, ըսել է թէ ամբողջ 14 դար անցեր է
 և 15^{րդ} դարն է. Այսպէս միւսներն ալ.

Պ. 1^o. 13 դար կ'ընէ.

» 2^o. 15^{րդ} դարուն մէջ.

» 3^o. 18^{րդ} » »

» 4^o. 19^{րդ} դարն է այժմ.

270. Մէծիտիյէի քառորդը 5 շրշ. լինելով՝ 675ը
 5 ով պիտի բաժնուի.

$$675:5=135.$$

Պ. 135 մէծիտիյէի քառորդ են.

271. Երկու թուոց արտադրեալը եթէ ծանուցեալ
 արտադրիչով բաժնեմք, միւս արտադրիչը կ'ենէ. ուրեմն,
 $7392:22=336$.

Պ. 336 է միւս արտադրիչը.

272. Պ. $3000:24=125$ է այն թիւը (ն **271**).

273. Պ. $3850:25=154$ ն է,

274. Պ. $1872:72=26$ անդամ մեծցնելու եմք,

275. Օխան 400 տամ լինելով՝ 345000 ը 400 ով պիտի բաժնեմք.
 Պ. $345000:400=862$ օխա 200 տրամ:

276. Մէհրիպէն 20 ղրշ. լինելով՝ 1735 ը 20 ով պիտի բաժնեմք.
 $1735:20=86$ մէհրիպէ և 15 ղրշ.
 Պ. 86 մէհրիպէ և 15 ղրշ. կ'ընէ:

277. Պ. $333333 \frac{1}{3}$ փարա, $8333 \frac{1}{3}$ ղրշ. 16 քէսէ 333 ղրշ. 13 փարա 1 ստակ:

278. Պ. $8600:20=430$ լիրա կ'ընէ:

279. Պ. $6520:12=543 \frac{1}{3}$ գրիւ:

280. Պ. $2880:45=64$ օրէն, կամ $64:30=2$ ամիս 4 օրէն:

281. 3 ամիսը կ'ընէ $30 \times 3=90$ օր. եթէ 90 օրուան մէջ 4680 օխա ջուր սպառի, 1 օրէն 90 անդամ նուազ կ'սպառի. ուստի 4680 ը 90 ով պէտք է բաժնել,
 $4680:90=52$:

Պ. 52 օխա ջուր առնելու է օրը:

282. Պ. $19838:763=26$ է անծանօթ թիւը (Խ 271):

283. 3 երկվեցեակը կ'ընէ՝ $12 \times 3=36$ ակոռ, որոյ համար 612 ղրշ. վճարուած լինելով՝ մէկ ակոռին համար 36 անդամ նուազ վճարուեր է, ուստի 612 ը 36 պիտի բաժնեմք,

$612:36=17$ ղրշ:

Պ. 17 ղրշ. կ'արժէ մէկ ակոռը:

284. Շաբաթական 44 ղրշ. վճարելով՝ 660 ղրշ. պարտքը կը հատնի,

$660:44=15$ շաբաթէն:

Պ. 15 շաբաթէն կրնայ պարտքը հատուցանել:

285. 14 շաբաթէն 756 զրշ. վճարելով՝ մէկ շաբաթէն՝ 14 անգամնուազ պիտի վճարուի, ուստի պէտք է 756 ը 14 ուլ բաժնել,

$$756:14=54 \text{ զրշ.}$$

Պ. 54 զրշ. վճարելու եմք ամեն մէկ անգամ.

286. 9000 ը 16 ուլ բաժնելով կը գտնուի :

$$9000:16=562 \text{ or } 12 \text{ ժամ.}$$

Տարին 365 օր լինելով՝ անկէ մէկ անգամ կրնամք հանել, կը մնայ 197 օր 12 ժամ. որով կ'իմանամք թէ 1 տարի 197 օր 12 ժամէն կրնայ քալել.

Պ. 1 տարի, 197 օր, 12 ժամէն կրնայ պտըտիլ.

287. Պ. $48:8=6$ օրէն կը լմնցնեն.

288. 3 ամիս և 8 օր կ'ընեն $3 \times 30 + 8 = 98$ օր. եթէ օրը 12 ժամ հաշուեմք կը լինի $98 \times 12 = 1176$ ժամ՝ զոր 256 ուլ բաժնելով կ'ուենենամք 4 ժամ 35 վայրկեան.

Պ. 4 ժամ 35 վայրկեանէն կրնան սպառել.

289. Յայտնի է որ տեղւոյ մը մակերեսէյթը կ'ըստացուի լայնութիւնը երկայնութեամբ բազմապատկելով. մակերեսիցն է 264՝ որ է 12 ոտք լայնութեան և երկայնութեան արտադրեալը, ուրեմն երկայնութիւնը գտնելու համար 264 ը 12 ուլ կը բաժնեմք (տ **271**):

Պ. $264:12=22$ ոտք է երկայնութիւնը.

290. 756 ը երեք թուոց արտադրեալ է. թիւերէն երկուքն են 9 և 7. ուրեմն եթէ 756 ը բաժնեմք 9 անգամ 7 ին արտադրեալովը, քանորդը կը լինի երրորդ թիւը. վասն զի $9 \times 7 = 63$ քռ. ոտքը ջրշեղջին մակերեսիցն է. հիմա գտնելու եմք թէ քանի անգամ 63 ը իրարու վրայ դրուելով 756 կ'ընէ. յայտնի է որ պիտի բաժնուի,

$$756:63=12.$$

Պ. 12 ոտք է բարձրութիւնը,

291. Մէկդի դրածն է $365 \times 1 = 365$, զոր եկամուտէն հանելով՝ տարեկան ծախքի համար կը մնայ $2920 - 365 = 2555$. հետեւարար օրական ծախք ընելու է,
 $2555 : 365 = 7$,

Պ. 7 ֆր. ծախք ընելու է օրը,

292. Եթէ իւրաքանչիւրէն մէյմէկ առնեմք, կը լինի $5 + 2 = 7$, որով 84 ը բաժնելով կը գտնեմք,
 $84 : 7 = 12$,

Պ. Ամեն մէկէն 12 ական հատ էր,

293. Եթէ մէկ մարդը օրը 15 ղրշ. առնէ, 9 օրը պիտի առնէ $9 \times 15 = 135$ ղրշ. եթէ մէկ մարդը 135 առնէ՝ քանի մարդիկ 8505 կ'առնեն, քանի անգամ որ 135 պարունակի 8505 ին մէջ՝ այնքան մարդիկ ուրեմն,
 $8505 : 135 = 63$,

Պ. 63 հոգի էին,

294. Մէկ վայրկենէն 15 օխա ջուր տալով՝ 24645 օխա ջուր պիտի տայ,
 $24645 : 15 = 1643$ վարկենէն.

1643 վայրկեանն ալ 60 ուլ բաժնելով ժամի կը վերածեմք,
 $1643 : 60 = 27$ ժամ 23 վայրկեան.

Պ. 27 ժամ 23 վայրկենէն կընայ լեցնել,

295. Իւրաքանչիւր երկրի բնակիչ տարածութեամբ բաժնելով կը գտնեմք թէ ամեն մէկ քառ. քիլոմէթրի վրայ քանի բնակիչ կ'իյնայ,

Յրանսայի համար $38088000 : 529000 = 72$ անձ

Ջուիցերիի » $2993000 : 41000 = 73$ »

Պ. Ջուիցերիի բնակիչք աւելի խիտ են,

296. Պ. Մէկ տարին կը մեռնի 1505000000: 35=43000000 անձ.

» Մէկ օրը » 43000000:365= 117808 »

» Մէկ ժամը » 117808: 24= 4908 »

» Մէկ վայրկեանը » 4908: 60= 81 »

(Վերջի մնացորդները զանց եղած է).

297. Նախ երկրիս շառաւիղ՝ 6366500 ը 60 ովբազմապատկելով լուսնի հեռաւորութիւնը կը գտնեմք, լուսնին հեռաւորութիւնն է,

$6366500 \times 60 = 381990000$ մէթր.

Ձայնը մէկ երկվայրկեանի մէջ 340 մէթր կ'ընթանայ, ուրեմն հեռաւորութիւնը 340 ովբաժնեմք.

$381990000 : 340 = 1123500$ երկվայրկեան

$1123500 : 60 = 18725$ վայրկեան

$18725 : 60 = 312$ ժամ 5 վայրկ.

$312 : 24 = 13$ օր

Պ. 13 օր 5 վայրկեանէն կ'ընայ հասնիլ.

298. Պ. $33 \times 33 \times 3 = 3267$.

299. Պ. $27 \times 100 = 2700$.

300. Պ. $66 \times 5 + 4 = 334$.

301. Պ. $29 \times 26 = 754$.

302. Պ. $19 \times 8 - 40 = 112$.

303. Պ. $\frac{40}{8} = 5$.

304. Պ. $\frac{100}{25} = 4$.

305. Պ. $\frac{9 \times 10 \times 3 \times 15}{45 \times 36} = 1$.

306. Պ. $\frac{5 \times 7 + 15}{8 - 3} + 10 = \frac{50}{5} + 10 = 20$.

307. Պ. $\frac{14 \times 1 + 14}{2 + 3} - 1\frac{1}{2} = \frac{70}{5} - 1\frac{1}{2} = 0$.

ԽԱՌՆ ԽՆԴԻՐԻ ԶՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ

308. Հոմերոսի թուականը Քրիստոսի թուականէն աւելի լինելուն կը հասկցուի որ Քրիստոսէ առաջ ծնած է. կը հանեմք Քրիստոսի թուականը Հոմերոսի թուականէն. $2552 - 1844 = 708$ տարի առաջ.

Իսկ գտնելու համար թէ մինչև հիմա քանի տարի կ'ընէ,

Որովհետև 1844 էն մինչև հիմա՝ $1893 - 1844 = 49$ տարի անցեր է, այս 49 ը կը գումարեմք 2552 ին վրայ. $2552 + 49 = 2601$ տարի է.

Կամ. որովհետև այժմ 1893 թուականն եմք, և Հոմերոսի թուականը 708 ալ աւելի է, 1893 ին վրայ կը յաւելումք 708 ը. $1893 + 708 = 2601$.

Պ. 1^o. 708 տարի Քրիստոսէ առաջ ծնած է.

Պ. 2^o. 2601 տարի է մինչև հիմա.

309. Ա. ը դրած է 11800, ուրեմն Բ. ն ալ 18600 — $11800 = 6800$ զրշ. դրած է. 6800 ը 11800 ին հաւասարելու համար պէտք է դեռ $11800 - 6800 = 5000$.

Պ. 5000 զրշ. աւելցնելու է.

310. Շահաճնին հաւասարապէս բաժնելու համար պէտք էր հաւասար գումար դնէին. այսինքն $18600 : 2 = 9300$ աւան. Արդ. Ա. ը 11800 զրշ. դրած լինելով կամ 9300 էն 2500 աւելի, և Բ. ն ալ 6800 դրած լինելով կամ 9300 էն 2500 պակաս, ուրեմն կը հետեւի թէ,

Պ. Բ. ը Ա. ին վճարելու է 2500 զրշ.

311. 32 օխա ապրայն 125 էն հանելով կը մնայ $125 - 32 = 93$ օխա զուտ վաճառք, որով եթէ 372 ը բաժնեմք, կը գտնեմք որ $372 : 93 = 4$ ի առեր է. ուրեմն 4 զրշ. շահելու համար վաճառելու է $4 + 1 = 5$ ի.

Պ. Օխան 5 զուրուշի վաճառելու է.

312. 2ին 430 զրշ. արժեքով համեմար պիտի արժէ
 $950=430=520$ զուրուշ,

համեմար ձիէն,

$520-430=90$ զուրուշ աւելի կարժէ.

Պ. 90 զուրուշ աւելի կարժէ.

313. 230 օխա շաքարը 6 զուրուշէն կ'ընէ՝ $230 \times 6 = 1384$ զրշ. զոր խահուէին գնով 9 ով եթէ բաժնեմք կը գտնեմք 153 օխա և 133 տրամ:

Պ. 153 օխա և 133 տրամ խահուէ տալու է.

314. 65 ոսկին 95 աւանէն կ'ընէ $65 \times 95 = 6175$, զոր բաժնեքով 108 ով կը գտնեմք 57 քանորդ և 19 մնացորդ.

Պ. 57 լիրա առնելու է և 19 զրշ.

315. 8 օխա իւղը 115 զրշ. ընելով 1 օխան կ'ընէ $115:8=14$ զրշ. 15 փարա. 15 օխան 213 զրշ. ընելով 1 օխան կ'ընէ $213:15=14$ զրշ. 8 փարա.

Պ. Վերջինը աժան է օխան 7 փարա.

316. 24 գառներ 12 աւանէն կ'ընեն $24 \times 12 = 288$ զրշ. մնացեալ $47-24=23$ գառները 18 աւանէն կ'ընեն $23 \times 18 = 414$ զրշ. ընդամենն ստացաւ $288+414=702$ զրշ. ինք վճարած էր 600 զրշ. նաև 50 զրշ. ծախք, կ'ընեն $600+50=650$, ուրեմն շահեցաւ,

$702-650=52$ զրշ.

Պ. 52 զրշ. շահեցաւ.

317. 1853 ը 17 ով բաժնեքով կ'իմանամք որ չորս ծրարը 109 մէթր էր. երեք ծանուցեալ ծրարներն են $28+24+30=82$ մէթր. զոր 109 էն հանելով կը մնայ $109-82=27$ մէթր Դ. ծրարին երկայնութիւնը.

Պ. 27 մէթր էր չորրորդ ծրարը.

318. 324ի գնելով և 432ի վաճառելով շահեցանք
 $432 - 324 = 108$ ֆր. զոր 9 ու կը բաժնեմք, հարցնե-
 լով, եթէ 1 մէթրէն 9 շահեմք հապա քանի մէթրէն 108
 կը շահեմք. $108 : 9 = 12$.

Պ. 12 մէթր էր.

319. $\frac{12185 - 11375}{54} = \frac{810}{54} = 15$ ձի (ի 318).

Պ. 15 ձի էր.

320. Կերակուրի ծախք $365 \times 4 = 1460$ ղրշ. վարձքի՝
 $12 \times 125 = 1500$ ղրշ. ղգեստի՝ 865. Ընդամենը կ'ընէ
 $1460 + 1500 + 865 = 3825$.

Պ. 3825 ղրշ. է տարեկան ծախքը.

321. 20 օխա գինի 5 ական ղուրուշէն կ'ընէ $20 \times 5 =$
 100 ղրշ. զոր 4 ու կը բաժնեմք ըսելով, Մէկ օխան 4
 ղուրուշի վաճառելով քանի օխան 100 ղրշ. կ'ընէ. այն-
 քան օխա որչափ որ 4 կը պարունակէ 100 ին մէջ.
 $100 : 4 = 25$ օխա՝ որոյ մէջ է 20 օխա գինին, հետե-
 ւ ապէս $25 - 20 = 5$ օխա ջուր աւելցեր է.

Պ. 5 օխա ջուր խառնելու է.

322. Կալուածի տարեկան հասոյթը 42500 ղուրուշ
 լինելով՝ քսաներորդը կ'ընէ.

$$42500 : 20 = 2125 \text{ ղուրուշ}$$

Ուրեմն տեսուչին տարեկանը կ'ընէ.

$$6850 + 2125 = 8975 \text{ ղուրուշ}$$

Պ. Տարեկան 8975 ղուրուշ առաւ.

323. Ընդ ամենն ստացաւ 9100 ղրշ. ուսկէ եթէ
 6500 ղրշ.ը հանեմք կը մնայ, $9100 - 6500 = 2600$ որ է
 հասոյթին քսանհինգերորդը, ուրեմն կալուածի հա-
 սոյթն է $2600 \times 25 = 65000$.

Պ. Կալուածի տարեկան հասոյթն 65000 ղրշ.

324. Բ. ին առածը Ա. էն 50 զըշ աւելի է, Գ. ին առածը Ա. էն 40 զըշ աւելի է, յայտնի է որ եթէ այս աւելիները չլինէին, պարզապէս 360 ը 3 ով կը բաժնէինք. արդ՝ որովհետեւ երկուքին ալ առածը Ա. էն աւելի է, ասոնց գումարն է $50+40=90$, զոր 360 էն հանեմք կը մնայ $360-90=270$, որն որ 3 ով բաժնեմք քանորդ 90 ը կը լինի Ա. ին առածը հետեւապէս $90+50=140$ Բ. ին առածը. $90+40=130$ Գ. ին առածը.

Պ. Ա. ը առաւ 90. Բ. ը 140. Գ. 130.

325. Ա. Բ. Գ. = 50
 Ա. Բ. = 40
 —
 Գ. = 10
 Ա. ին եւ Բ. ին ծախսածներուն գումար 40 ը ընդհանուր գումար 50 էն հանեցինք մնացած 10 ը Գ. ին ծախքը եղաւ.

 Ա. Բ. Գ. = 50
 Ա. Գ. = 30
 —
 Բ. = 20
 Ա. ին եւ Գ. ին ծախսածներուն գումար 30 ը ընդհանուր գումար 50 էն հանեցինք մնացած 20 ը Բ. ին ծախքը եղաւ. Իսկ Ա. ին ծախքը գտնելու համար կամ 10 ը

(Գ. ին ծախքը) 30 էն կը հանեմք, կամ 20 ը (Բ. ին ծախքը) 40 էն որով Ա. ին ծախքն ալ կը լինի 20:

Պ. Ա. ը ծախք ըրաւ 20. Բ. ը 20. Գ. ը 10.

326. Երեք աղբիւրը մէկ վայրկեանի մէջ կուտան,

$$17+28+35=80 \text{ օխա ջուր:}$$

6 ժամ 20 վայրկեանը կ'ընէ $6 \times 60 + 20 = 380$ վայրկեան.

Եթէ մէկ վայրկեանը 80 օխայ ջուր ասն՝ 380 վայրկեանը կուտան,

$$380 \times 80 = 30400.$$

Պ. Աւաղանը 30400 օխա ջուր կը պարունակէ:

327. Երկուրը մէկտեղ 1 վայրկեանի մէջ կը պարսպեն $4+5=9$ օխա՝

11 ժամը կ'ընէ $11 \times 60 = 660$ վայրկեան.

$$660 \times 9 = 5940 \text{ օխա ջուր պարսպեցին.}$$

ուրեմն $6720 - 5940 = 780$ օխա ջուր մնաց:

Պ. 780 օխա ջուր կը մնայ աւաղանին մէջ:

328. Երկուքին ամսականը կ'ընէ $430 + 380 = 810$ զրշ.

» տարեկանը » $810 \times 12 = 9720$ »

9720ը 540 ով կը բաժնեմք ըսելով, եթէ մէկ եզը 540 զրշ. ընէ, քանի՞ եզը 9720 կ'ընէ, այնչափ եզ որչափ որ 540 կը պարունակի 9720 ին մէջ.

$$9720 : 540 = 18.$$

Պ. 18 եզ կըցան գնել.

329. Ամիսը 24 օր աշխատելով կը շահի $24 \times 14 = 336$ զրշ. տարին կ'ընէ $336 \times 12 = 4032$ զրշ. 3 ամիսը 500 զրշ. ծախք կ'ընէ, տարուան մէջ 4 հատ 3 ամիս կայ. ծախք կ'ընէ $500 \times 4 = 2000$ զրշ. ուրեմն կ'աւելնայ $4032 - 2000 = 2032$.

Պ. Տարին 2032 զրշ. խնայողութեամբ կը պահէ.

330. 9 գործաւորաց օրականը 17 ականէն կ'ընէ, $9 \times 17 = 153$ զրշ.

Մնացեալներն են $16 - 9 = 7$ գործաւոր. որոց օրականն 14 ականէն կ'ընէ, $7 \times 14 = 98$ զրշ.

Բոլորին մէկ օրականն է $153 + 98 = 251$ զրշ.

25 օր աշխատած լինելուն՝ վճարելու է,

$$251 \times 25 = 6275 \text{ զրշ.}$$

Պ. 6275 զրշ. վճարելու է.

331. Եթէ օրական 9 զրշ. ծախք ընեմ 133 օր կը բաւէ, ուրեմն ունեցածս է $133 \times 9 = 1197$ զրշ.

Եթէ օրական 7 զրշ. ծախք ընեմ 1197 զուրուշք քանի օր կը բաւէ, այնչափ օր որչափ 7 կը պարունակի 1197 ին մէջ.

$$1197 : 7 = 171 \text{ օր.}$$

Պ. 171 օր կը բաւէ.

332. Բ. ը Ա. էն 120 զըշ. աւելի առաւ, Գ. ն ալ Բ. էն 160 զըշ. աւելի կամ Ա. էն 280 զըշ. աւելի. $120 + 280 = 400$. այս 400ը 1000 էն հանելով մնացած 600ը 3 ուլ բաժնեմք կը լինի 200 զըշ. Ա. ին բաժին. հետեւաբար $200 + 120 = 320$ Բ. ին. և $320 + 160 = 480$ Գ. ին.

Պ. Ա. ը առաւ 200. Բ. ը 320. Գ. ը 480 զըշ.

333. 8 վայրկեան և 13 երկվայրկեանը՝ երկվայրկեանի կը վերածեմք կը լինի $8 \times 60 + 13 = 493$, որով կը բաժնեմք 34600000ը,

Պ. 70482 ու կէս փարսախ.

334. Եթէ հոսանքն ի վար երթայ՝ մէկ ժամէն կ'երթայ $9 + 4 = 13$ մղոն, ուրեմն 13 ժամէն կ'երթայ $13 \times 13 = 169$.

Եթէ հոսանքն ի վեր երթայ՝ մէկ ժամէն կ'երթայ $9 - 4 = 5$ մղոն, ուրեմն 13 ժամէն կ'երթայ $5 \times 13 = 65$.

Պ. 1^o. 169 մղոն կ'երթայ, 2^o. 65 մղոն կ'երթայ.

335. Ծանուցեալ հեռաւորութեանց գումարն 1854 ուլ կը բաժնեմք,

Պ. 676 մղոն և 124 մէթր.

336. Օրը 5 անգամ գլանիկ կը ծխէ, մէկ գլանիկը 8 վայրկեան տեւելով 5 գլանիկին համար $8 \times 5 = 40$ վայրկեան կը վատնուի մէկ աւուր մէջ, ուրեմն

Տարին կը վատնուի $365 \times 40 = 14600$ վայրկեան, 14600 վայրկեանը ժամի կը վերածեմք

$14600 : 60 = 243$ ժամ 20 վայրկեան

Պ. 243 ժամ 20 վայրկեան.

337. 15 զըշ. ք փարայի վերածեմք կը լինի,
 $15 \times 40 = 600$ փարա.

Եթէ 25 օրուան մէջ 600 փարայի ծխախոտ գործածէ
 Մէկ օրը պիտի գործածէ $600:25=24$ փարայի,
 Տարուան մէջ՝ $24 \times 365=8760$ փարայի,
 Որն որ կընէ $8760:40=219$ դր2.

Պ. 219 դր2.

338. Ա. ը գնաց $8 \times 4=32$ մղոն. Բ. ը՝ $7 \times 3=21$ մղոն.
 Եթէ միեւնոյն կողմը երթան, կը հեռանան,
 $32-21=11$ մղոն.

Եթէ հակառակ կողմ երթան կը հեռանան,
 $32+21=53$ մղոն.

Պ. 1°. 11 մղոն հեռացան իրարմէ:

» 2°. 53 » » »

339. Բ. ը Ա. Էն $12-8=4$ մղոն ա. ելի կը քալէ մէկ
 ժամէն, որով 120 ը բաժնելով կ'ունենամք $120:4=30$
 ժամ. որով հետեւ մէկ ժամէն 12 մղոն կ'երթայ, ուրեմն,
 $30 \times 12=360$ մղոն.

Պ. Բ. ը Ա. ին 360 մղոնէն պիտի հասնի:

340. Երկուքը մէկ ժամէն կը քալեն $8+7=15$ մղոն,
 որով 1560 ը բաժնեմք, $1560:15=104$ ժամ վերջը կը
 հանդիպին.

Ադրիանապօլսէն ելնողը օրը 8 ժամ կը քալէ,
 ուրեմն $104 \times 8=832$.

Կ. Պօլսէն ելնողը օրը 7 ժամ կը քալէ, ուրեմն
 $104 \times 7=728$.

Պ. 1°. 104 ժամ վերջը իրարու կը հանդիպին:

» 2°. Կ. Պօլսէն 728 մղոն հեռու, և Ադ-
 րիանապօլսէն 832 մղոն.

341. Երկուքը մէկ ժամէն կ'երթան $6+7=13$ մղոն.

օրը 8 ժամ քալելով 9 օրը կ'ընէ $8 \times 9 = 72$ ժամ. եթէ մէկ ժամը 13 մղոն քալեն 72 ժամը պիտի քալեն,
 $72 \times 13 = 936$.

Պ. 936 մղոն է քաղաքաց հեռաւորութիւնը.

342. Պ. Ա. ճամբորդին մեկնած տեղէն 5265 մղոն հեռու և Բ. ճամբորդին մեկնած տեղէն 3159 մղոն հեռու (Խ **340**).

343. Օրը 15 քիլոմէթր քալելով 32 օրէն տեղն հաւասար, ըսելէ թէ տեղւոյն հեռաւորութիւնն է $15 \times 32 = 480$ քիլոմէթր.

Երկրորդը նոյն ճամբան երթալու համար 8 օր աւելի ժամանակ կորսնցուց ուրեմն $32 + 8 = 40$ օրէն գնաց.

Եթէ 40 օրէն 480 քիլոմէթր գացեր է մէկ աւուր գացածը գտնելու համար կը բաժնեմք,

$$480 : 40 = 12 \text{ քիլոմէթր.}$$

Պ. երկրորդը օրը 12 քիլոմէթր կ'երթար.

344. 8 ին վրայ 66 գումարելով կ'ուշեցնամք, $8 + 66 = 74$ երկուշարթի ժամ 74 ին,

Բայց օրը 24 ժամ լինելով յաջորդաբար 24 կը հանեմք մինչեւ որ մնաւորդը 24 էն փոքր լինի.

$$74 - 24 = 50 \text{ ժամ երեքշարթի,}$$

$$50 - 24 = 26 \text{ » չորեքշարթի,}$$

$$26 - 24 = 2 \text{ » հինգշարթի.}$$

Պ. Հինգշարթի ժամ 2 ին.

345. Մին 12 օր քալեր է օրը 60 քիլոմէթր, ըսել է թէ ընդ ամենը քալեր է $12 \times 60 = 720$ քիլոմէթր, զոր պիտի քալէ միւսը՝ օրը 48 քիլոմէթր ընելով, ուրեմն կը հասնի տեղը,

$$720 : 48 = 15 \text{ օրէն.}$$

երկրորդը որ 20 օր քալեր է օրը 48 քիլոմէթր, հետեւաբար ընդ ամենն քալեր է $48 \times 20 = 960$ քիլոմէթր, զոր պիտի քալէ առաջինը՝ օրը 60 քիլոմէթր ընելով, ուրեմն կը հասնի տեղը

$$960:60=16 \text{ օրէն.}$$

Պ. Ա. ը 16 օրէն. Բ. ը 15 օրէն կը հասնի.

346. Մեծ անիւր մէկ դառնալուն 5 կանգուն կ'առնէ, 5000 կանգուն գացեր է. ուրեմն դարձեր է $5000:5=1000$ անգամ. փոքրն ալ դարձեր է $1000+250=1250$ անգամ, որով 5000 ը կը բաժնեմք, ըսելով. եթէ 1250 անգամ դառնալով 5000 կանգուն կ'երթայ, հապա մէկ անգամ դառնալով քանի՞ կանգուն, $5000:1250=4$.

Պ. Փոքր անիւր մէկ դառնալուն 4 կանգուն կ'ընէ.

347. Եթէ մէկ ժամէն 7920 մէթր երթայ՝ մէկ վայրկենէն երթալու է $7920:60=132$ մէթր, զոր 3 ուլ կը բաժնեմք, հարցնելով, եթէ մէկ դառնալով 3 մէթր ընէ, քանի՞ անգամ դառնալով 132 մէթր պիտի ընէ. $132:3=44$.

Պ. 44 անգամ դառնալու է վայրկենի մը մէջ.

348. Եթէ 15 օրը 540 ընդունեցին՝ օրականին կ'ընէ $540:15=36$ զրշ. ուսկէ եթէ հօրը 20 զրշ. օրականը հանեմք կը մնայ որդւոյն օրականը $36-20=16$.

Պ. 16 զրշ. է տղուն օրականը.

349. Ամիսը կը խմեն $12+7+6=25$ օխա, եթէ ամիսը 25 օխա խմեն, 300 օխան պիտի խմեն, $300:25=12$ ամիսէն.

Պ. Մէկ տարի կը բաւէ.

350. Մէթրը 13 ի դնելով և 17 ի վաճառելով կը

շահիմք $17-13=4$ ֆրանք, որով 132 ը բաժնելով կը գտնեմք $132:4=33$.

Պ. 33 մէթր էր.

351. 9 մէթրը 117 ի զնեց 1 մէթրը $117:9=13$ ի կուգայ,

7 » 105 ի վաճառեց » » $105:7=15$ ի »

Ուրեմն մէկ մէթրէն շահեցաւ $15-13=2$ ֆրանք, որով 214 ը կը բաժնեմք $214:2=107$.

Պ. 107 մէթր գնած էր.

352. 6 հակը 64 էն կ'ընէ $6 \times 64 = 384$. 5 հակը 68 էն կ'ընէ $5 \times 68 = 340$. կը մնայ $15 - (6+5) = 4$ հակ.

Գնածները $384 + 340 = 724$, զոր 1000 էն հանելով մնացեալը 4 հակին գինն է, $1000 - 724 = 276$. ուրեմն $276:4=69$.

Պ. 69 ֆր. էր մնացեալին իւրաքանչիւր հակը.

353. 18 երկվեցեակը կ'ընէ $18 \times 12 = 216$. մէկուն մէջ 40 աւելի լինելով 40 ը հանեմք, $216 - 40 = 176$, որ հաւասար է փոքր արկղին մէջ դրուածին կրկինը, ուրեմն քիչ նարինջ պարունակող արկղին մէջ կայ $176:2 = 88$ նարինջ, և շատ նարինջ պարունակողին մէջ $88 + 40 = 128$.

Փորձ $128 + 88 = 216$. նաև $128 - 88 = 40$.

Պ. Միոյն մէջ 128 , միւսին մէջ 88 նարինջ.

354. Եթէ երկրորդին գնածն է 508 օխա, ուրեմն առաջինոյն գնածն է $1150 - 508 = 642$ օխա,

642 օխային համար 4494 դր. վճարած լինելով օխան կուգայ

$4494:642=7$ դրշի.

Հիմա կը պահանջուի գտնել թէ երկրորդը որ 508 օխա գնեց ինչ վճարելու է, 508 ը 7 ով կը բազմապատկեմք,

$508 \times 7 = 3556$ դր. վճարելու է.

Պ. 3556 դր. վճարելու է.

355. Մնառուկ մը թէյին գինն է 2200 ղրշ. զոր գնե-
լու համար 280 ղրշ. կը պակսի, ուրեմն Ահարոնի ու-
նեցածն է,

$$2200 - 280 = 1920 \text{ ղրշ.}$$

1920 ղրշ ու 96 օխա թէյ գնած է, ուրեմն մէկ օ-
խան կ'արժէ, $1920 : 96 = 20$ ղրշ.

եթէ օխան 20 կ'արժէ՝ 2200 ղրշ. ու կը գնուի
 $2200 : 20 = 110$ օխա.

Պ. Մնառուկը 110 օխա թէյ կը պարունակէր.

356. 1200 կանգունը 50 ականէն կ'ընէ $1200 \times 50 =$
60000 ղրշ. ասուին 160 կանգուն պակսելով մնացած է
 $1200 - 160 = 1040$ կանգուն, որով 60000 ը բաժնեմք,
 $60000 : 1040 = 57$ ղրշ. 28 փարա գրեթէ,

Պ. Վնաս չընելու համար կանգունը 57 ղրշ. 28
փարա վաճառելու է.

357. Պ. 10 ղրշ. ի պիտի վաճառէր.

358. Պ. 275 օխա էր պակսածը.

359. Օրական 21 շահելով շաբաթը կը շահի $21 \times 6 =$
126 ղրշ. շաբաթը 126 ծախք ընել ուզելով, օրական
ծախք ընելու է $126 : 7 = 18$.

Պ. Օրական 18 ղրշ. ծախք ընելու է.

360. Երկու խանութին ամսականը կ'ընէ $450 + 740 =$
1190 ղրշ. և 7 ամսականը կ'ընէ $1190 \times 7 = 8330$ ղրշ.
զոր 75 ու կը բաժնեմք,

$$8330 : 75 = 111 \text{ ղրշ. } 3 \text{ փարա գրեթէ:}$$

Պ. Ամեն մէկուն կ'ընայ 111 ղրշ. և 3 փր. գրեթէ

361. Մէկ ամսականը կ'ընէ $370 + 530 = 900$ ղրշ. 6

ամսուանը կընէ $900 \times 6 = 5400$ զրշ. որ է բաժնուած ստակը, զոր 108 ուլ կը բաժնեմք.

$$5400 : 108 = 50 \text{ մարդ.}$$

Պ. 50 մարդ էր:

362. 25 հողւոյ բաժնեւում մարդ գլուխ 96 տկան ինկաւ, ուրեմն բաժնուած գումարն էր, $96 \times 25 = 2400$ զրշ. երկու խանութին մէկ ամսական վարձքը՝ $320 + 480 = 800$ զրշ. լինելով 2 400 զրշ. ն ալ՝ $2400 : 800 = 3$ ամսուան վարձք կը լինի.

Պ. 3 ամսուան վարձք էր:

363. Գումարը 84 մարդոց բաժնուելով իւրաքանչիւրին 50 զրշ. ինկաւ, ըսել է թէ բաժնուած գումարն էր $84 \times 50 = 4200$ զրշ. որն որ երկու խանութին 7 ամսուան վարձքն է, եթէ 7 ամսուան վարձքը 4200 է, ուրեմն մէկ ամսուան վարձքը $4200 : 7 = 600$ է, ուսկէ ծանուցեալ 260 ը հանելով միւս խանութին վարձքը կը լինի $600 - 260 = 340$.

Պ. 340 զրշ. է միւս խանութին վարձքը:

364. Պ. $\frac{270000}{150 \times 80} = 30$ կարգ իրարու վրայ շարուած է:

365. Պ. $167 \times 256 + 105 = 42857$ զրշ. էր:

366. Պ. 3396520 է բաժանելին (10 **365**):

367. Թիւը 15 ուլ բաժնեւում կամ փոքրցնելով 140 ունեցեր եմք ուրեմն այն թիւը 140 էն 15 անգամ մեծ է, $140 \times 15 = 2100$.

Պ. 2100 ը:

368. 20 ը 5 ուլ բաժանման քանորդն է, ուրեմն բաժանելին է $20 \times 5 = 100$, այս 100 ը 4 ուլ բաշմապատկութեան մը արտադրեալն է, ուրեմն նոյն թիւը պիտի լինի $100 : 4 = 25$.

Պ. 25 թիւը:

369. Գ. $\frac{948000}{125 \times 44} = 346$ է երրորդ թիւը:

370. Փոքրագոյնը 67 լինելով և տարբերութիւնը 42, մեծագոյնը կը լինի $67 + 42 = 109$, և արտադրեալն ալ,
 $67 \times 109 = 7303$:

Գ. 7303 է արտադրեալը:

371. Լեցնողը մէկ ժամէն 18920 օխայ ջուր կուտայ, պարպողը մէկ ժամէն 15320 օխայ ջուր կը պարպէ, մէկ ժամէն աւաղանին մէջ կը մնայ $18920 - 15320 = 3600$ օխայ ջուր, որով 25200 ը կը բաժնեմք, հարցնելով, եթէ մէկ ժամէն 3600 օխայ ջուր լեցուի, քանի՞ ժամէն 25200 օխայ ջուր կը լեցուի:

$$25200 : 3600 = 7.$$

Գ. 7 ժամէն կը լեցուի:

372. Զրհեղեղէն մինչև Քրիստոս 3308 տարի լինելով, և Քրիստոսէ մինչև Կ. Պոլսոյ առումը 1453 տարի ուրեմն զրհեղեղէն մինչև Կ. Պոլսոյ առումը երկու թուոց գումարելին չափ կը լինի, կամ

$$3308 + 1453 = 4761 \text{ տարի.}$$

Գ. 4761 տարի է:

373. 24° ը 0° էն վեր լինելով և 13° ը 0° էն վար, ասոնց տարբերութիւնը մէյ մը 24 է մէյ մ'ալ 13 , հետեւապէս գումարելով կը գտնեմք $24 + 13 = 37^\circ$.

Գ. 37° է տարբերութիւնը:

374. 100 օխայ զինին 90 փարսէն $100 \times 90 = 9000$ փարս
 $\frac{150}{250}$ » » 120 » $150 \times 120 = 18000$ »
 1 » » » $27000 : 250 = 108$ »

Գ. Օխան 108 փարսնոց գինի կը լինի:

375. 5 տափառը 23 ականէն $23 \times 4 = 115.3$ վերարկուն 75 ականէն $3 \times 75 = 225$. գումարն $115 + 225 = 340$ ֆր. ինք վճարեց 240 ֆր. 60 ալ ծախք ըրաւ, կ'ընէ

$240 + 60 = 300$, ուրեմն շահեցաւ $340 - 300 = 40$.

Պ. 40 ֆրանք շահեցաւ:

376. Ա. ը 3 ժամ կ'երթայ եւ չորրորդին կը հանգչի $3 + 1 = 4$
Բ. ը 4 » » եւ հինգերորդին » $4 + 1 = 5$.

Այս և և 5 թիւերով զատ զատ 120 ը բաժնելով կ'ի-
մանամք որ Ա. ը $120 : 4 = 30$ անգամ հանգչեր է, և Բ. ը
 $120 : 5 = 24$ անգամ հանգչեր է, ուրեմն իրարմէ $30 -$
 $24 = 6$ ժամ հեռացեր են, մէկ ժամը 7 մղոն լինելով
կ'ընէ $7 \times 6 = 42$.

Պ. 42 մղոն հեռացան իրարմէ:

377. Ճամբուն կէսը կ'ընէ $240 : 2 = 120$ մղոն.

Ա. ը օրը 8 մղոն քալելով 120 մղոնը կը քալէ $120 : 8 = 15$ օրէն.
Բ. ը » 10 » » 120 » » $120 : 10 = 12$ »

Ուրեմն, Ա. ը Բ. էն $15 - 12 = 3$ օր աւելի քալեր է,
կամ յառաջ ճամբայ ելեր է:

Պ. Ա. ը Բ. էն 3 օր առաջ ճամբայ ելած էր:

378. Մէկ փարսախը 20 երկվայրկենէն ընելով՝

34600000 փարսախը պիտի ընէ,

$34600000 \times 20 = 692000000$ երկվայրկենէն,

Զոր մեծագոյն տեսակներուն վերածեմք,

$692000000 : 60 = 11533333$ վայր. 20 երկվ.

$11533333 : 60 = 192222$ ժամ 13 վայրկ.

$192222 : 24 = 8009$ օր 6 ժամ

$8009 : 365 = 21$ տարի 344 օր:

Պ. 21 տարի, 344 օր, 6 ժամ, 13 վայրկեան,
20 երկվայրկենէն:

379. 7680 ը 12-ով կը բաժնեմք, հարցնելով, եթէ
մէկ մարդուն համար 12 զրը. վճարուի, քանի՞ մարդուն
համար 7680 զրը. պիտի վճարուի, $7680 : 12 = 640$ մարդ-

են ընդամենը, զոր 80 ուլ կը բաժնեմք, ըսելով, եթէ մէկ նաւուն մէջ 80 մարդ գրուի, քանի՞ նաւերու մէջ պիտի գրուին 640 մարդը, $640:80=8$ նաւ:

Պ. Նաւատորմիղը 8 նաւերէ բաղկացեալ էր:

380. 15 օխան 525 ի վաճառելով մէկ օխան վաճառած կը լինի $525:15=35$ ղուրուշի, ուսկէ 8 ղըշ. շահ ըրեր է, հետեւապէս ինք օխան 35—8=27 ղուրուշի գներ է, որով եթէ 1782 ը բաժնեմք կը գտնեմք $1782:27=66$.

Պ. 66 օխա թէյ գնած էր:

381 63 օխա թէյը 1953 ի գներց, օխան կուգայ $1953:63=31$ ղըշ. օխան 40 վաճառելով կը շահի 40—31=9 ղըշ. որով 180 ը կը բաժնեմք, $180:9=20$,

Պ. 20 օխա թէյ վաճառելու է:

382. 55 օխան 990 ի գներց օխան կուգայ $990:55=18$ ղըշ.

14 » 364 ի վաճառեց » » $364:14=26$ »

Հեռուապէս մէկ օխայէն շահեցու $26-18=8$ »

Պ. Մէկ օխայէն 8 ղըշ. շահեցաւ:

383. 18 արշընը 612 ի վաճառեց, արշընը կուգայ 612:18=34 ղըշ. 34 էն 9 շահ լինելով ինք արշընը գնած կը լինի $34-9=25$. և 72 արշընը $72 \times 25=1800$.

Պ. 1800 ղըշ. վճարեր է:

384. Յովսէփի ծախքը 805՝ և եկամուտը 600 լինելով ծախքը $805-600=205$ ֆր. աւելի է. ըսել է թէ պատրաստ ստակէն ամիսը 205 կը ծախսէ, ուրեմն, $6150:205=30$ ամիսէն կը հասնի:

Պ. 30 ամիսէն ստակը պիտի սպառի:

385. 9000 ը 3 տարիէն կամ $3 \times 12=36$ ամիսէն հատաւ, ուրեմն ամիսը $9000:36=250$ ղըշ. կ'առնէր, և

այս անոր համար որ՝ եկամուտը ծախքէն այսչափ պակաս էր, ուրեմն $760 - 250 = 510$ էր եկամուտը,

Պ. 510 ղրշ. է ամսական եկամուտը.

386. Եթէ 9 օր աւելի աշխատէր 270 պիտի շահէր կամ $270 - 180 = 90$ աւելի պիտի շահէր, ուրեմն օրականն է. $90 : 9 = 10$ ղրշ. և աշխատեցաւ $180 : 10 = 18$ օր:

Պ. 1°. Օրականն է 10 ղրշ. 2°. 18 օր աշխատեցաւ:

387. Ա. ը 1 օրէն կը կազմէ $960 : 16 = 60$ գիրք. Բ. ը $960 : 24 = 40$ գիրք, և Գ. ը $960 : 48 = 20$ գիրք. ամենը մէկտեղ 1 օրէն կը կազմեն $60 + 40 + 20 = 120$ գիրք. մէկ օրէն 120 գիրք կազմելով՝ ամբողջը պիտի կազմեն $960 : 120 = 8$ օրէն:

Ա. ը 1 օրը 60 գիրք կազմելով՝ 8 օրէն պիտի կազմէ $60 \times 8 = 480$ գիրք. Բ. ը $40 \times 8 = 320$. Գ. ը $20 \times 8 = 160$.

ԾԱՆՈթ. Կազմուելիք գրքերու քանակութիւնն, կամ կատարելիք գործին չափն ինչ որ ալ լինի, միւս պայմաններն նոյն պահելով, դարձեալ պատասխանն 8 օր կը լինի:

Պ. Երեքը մէկտեղ աշխատեցնելով 8 օրէն կը լիննայ. Ա. ը պիտի կազմէ 480. Բ. ը 320 և Գ. ը 160 գիրք:

388. Երկուքին դրածնունդումարն 6000 էն հանեմք Գ. ին դրածը գտնելու համար, Գ. ին դրածն է 6000 — $(2450 + 1895) = 1655$. իրենց ծախքն է $6000 - 1038 = 4962$, զոր 3 ով բաժնեւելով իւրաքանչիւրին բաժինը կը լինի $4962 : 3 = 1654$ ղրշ:

Ա. ը. 2450 ղրշ. դրած լինելով՝ ետ պիտի առնէ ուրեմն $2450 - 1654 = 796$. Բ. ը՝ $1895 - 1654 = 241$. Գ. ը՝ $1655 - 1654 = 1$ ղրշ:

Պ. Ա. ը պիտի ընդունի 796 ղրշ. Բ. ը 241. Գ. ը 1:

389. Մէկ տուփը 12 երկվեցեակ՝ կամ $12 \times 12 = 144$ ծայր պարունակելով 18 տուփը կը պարունակէ $144 \times 18 = 2592$ ծայր. 4 ծայրը 10 փարայի վաճառելով պիտի ընէ $2592 : 4 = 648$ հատ 10 փր. կամ $648 \times 10 = 6480$ փարա կամ $6480 : 40 = 162$ զրշ. ինք տուփը 6 զրշի. գներէր կամ ամենուն վճարած էր $18 \times 6 = 108$. ուրեմն շահեցաւ $162 - 108 = 54$.

Պ. 54 զրշ. շահեցաւ.

390. Մէկը միւսէն 6 մէթր աւելի լինելով՝ 200—176=24 աւելի կա'րժէ. ուրեմն մէթրին գինն է $24 : 6 = 4$ զրշ. մեծ ծրարը կը պարունակէ $200 : 4 = 50$ մէթր. փոքր ծրարն ալ $50 - 6 = 44$ մէթր.

կամ, փոքր ծրարը $176 : 4 = 44$.

Պ. Մեծ ծրարն է 50 մէթր. փոքր ծրարը 44 մէթր.

391. Երկուքը մէկեզդ 1 վայրկեանէն կուտան $12 + 18 = 30$ օխա ջուր. 4 ու կէս ժամը կ'ընէ $4 \times 60 + 30 = 270$ վայրկեան.

Ուրեմն աւազանը կը պարունակէ $270 \times 30 = 8100$ օխա ջուր.

Ա. ը մի ա'լ վազելով պիտի լեցնէ $8100 : 12 = 675$ վայրկեանէն.

Կամ $675 : 60 = 11$ ժամ 15 վայրկեանէն.

Եւ Բ. ը մինակ վազելով պիտի լեցնէ $8100 : 18 = 450$ վայրկեանէն.

Կամ $450 : 60 = 7$ ժամ 30 վայրկեանէն.

Պ. Ա. ը մինակ 11 ժամ 15 վայրկեանէն.

Յ. Բ. ը 7 30 »

392. Հաւասար չափով գնուելով իւրաքանչիւր տեսակէն գնուած կը լինի $780 : 2 = 390$ մէթր. Բ. տեսակին մէթրը 30 ֆր. կարժէ ուրեմն 7 մէթրը կարժէ $30 \times 7 = 210$ ֆր. Ա. տեսակին ալ 5 մէթրը 210 կարժէ ուրեմն մէկ մէթրը պիտի արժէ $210 : 5 = 42$ ֆր.

Ընդ ամենը պիտի վճարուի,

Պ. $390(42 + 32) = 28080$ ֆր.

393. Ա. ին բաժինը որովհետև 340 արշըն աւելի պիտի լինի ուստի նախապէս 1872 էն հանեմք.

1872—340=1532 որ է Բ. ին կրկինը

Ուրեմն Բ. ին բաժինն է 1532:2=766 արշըն

եւ Ա. ին » 766+340=1106 »

Եթէ հաւասարապէս բաժնուէր իւրաքանչիւրին կ'իյնար 1872:2=936 արշըն. արդ. Ա. ը 1106 արշըն առած լինելով 1106—936=170 արշըն աւելի առեր է բուն իր բաժինէն, և որոյ համար 1530 զրշ. վճարեր է, ուրեմն մէկ արշընը կարժէ 1530:170=9 զրշ և հետեւապէս բոլոր երկիրը 1872×9=16848 զրշ.

Պ. 1° Ա. ին բաժինն է 1106. Բ. ինը՝ 766 քա. արշըն.

Պ. 2° Բոլոր երկրին արժէքն է 16848 զրշ.

394. Հինգ գ ործաւորին մէկ օրուան հնձածը կուտայ 3×80×5=1200 օխա ցորեն. ընդամենը 15000 օխա ցորեն է. ուրեմն աշխատեր են,

15000:1200=12 ու կէս օր:

Մէկ մարդը օրը 80 որայ կ'ընէ, ուրեմն,

80×12 եւ կէս =1000 որայ.

Իւրաքանչիւրն ստացաւ 10×12 եւ կէս =125 զրշ.

Պ. 1°. 12 ու կէս օր աշխատեցան.

2°. Իւրաքանչիւրը 1000 որայ ըրաւ.

3°. Իւրաքանչիւրը 125 զրշ. ստացաւ.

395. 1 ժամ և 3 վայրկեան կընեն՝ 60+3=63 վայրկեան, անցեալ կիրակիէն մինչև այս կիրակի 7 օր է. արդ. 7 օրուան մէջ 63 վայրկեան յառաջ երթալով մէկ օրէն յառաջ կերթայ 63:7=9 վայրկեան,

Պ. 9 վայրկեան.

396. 7 օրը կ'ընէ՝ $7 \times 24 = 168$ ժամ, իւրաքանչիւր ժամու 15 երկվայրկեան յառաջ երթալով՝ 168 ժամու մէջ $168 \times 15 = 2520$ երկվայրկեան յառաջ կ'երթայ, զոր 60 ուլ բաժնելով վայրկեանի կը վերածեմք, $2520 : 60 = 42$ վայրկեան.

Պ. 42 վայրկեան.

397. Շաբաթը կ'ընէ $7 \times 24 = 168$ ժամ, որոյ մէջ քանի 4 որ կը պարունակէ այնքան վայրկեան ետ մնացեր է, $168 : 4 = 42$ վայրկեան ետ մնացեր է, ուրեմն ճիշդ ժամը գտնելու համար 42 ը կաւելցնեմք 5 ժամ 18 վայրկեանին վրայ և կունենամք 6.

Պ. ճիշդ ժամը 6 է.

398. 4 ժամ 18 վայրկեանը 5 ժամ 9 վայրկեանէն հանելով կ'իմանամք թէ 51 վայրկեան ետ մնացեր է. արդ. 3 վայրկեան ետ կը մնայ 5 ժամու մէջ, ուրեմն որչափ որ 51 ին մէջ 3 կը պարունակի այնչափ 5 ժամ. կամ,

$$\frac{51 \times 3}{3} = 85 \text{ ժամ.}$$

Պ. 85 ժամէ ի վեր ետ մնալ սկսեր է.

399. Նախընթացին նման 8 ժամ 20 վայրկեանը 9 ժամ 5 վայրկեանէն հանելով կ'իմանանք թէ 45 վայրկեան յառաջ գացեր է, և այս,

$$\frac{45 \times 8}{3} = 120 \text{ ժամու կամ 5 աւուր մէջ}$$

Որն որ շաբաթէն ետ երթալով կը գտնեմք երկուշաբթի.

Պ. երկուշաբթի ժամը 8 ը 20 անցած.

400. Հատը 12 փարայէն 75 հատը կ'ընէ, $75 \times 12 = 900$ փր. ըրած վնասը, բայց այդ վնասը չ'ընելու համար հատը $16 - 12 = 4$ փր. շահով կը վաճառէ, ուրեմն

$900:4=225$ է մնացեալ նարինջներն,
Հետեապէս գնածն ալ $225+75=300$.

Պ. 300 նարինջ գնած էր:

401. Կամուրջէն մեկնելու ասեն	444
Պէշիկթաշ ելնողները $444:3=148$ հանեմք	<u>-148</u>
	296
Պէշիկթաշէն մնողները	<u>+44</u>
» մեկնելու ասեն կար	340
Օրթագիւղ ելնողները $340:4=85$	<u>-85</u>
	255
Օրթագիւղէն մնողները	<u>+15</u>
» մեկնելու ասեն կար	270
Գուրու չէշմէ ելնողները $270:5=54$	<u>-54</u>
	216
Գուրու չէշմէն մնող	<u>+1</u>
» մեկնելու ասեն կար	217
Արնաուոս գիւղ ելնողները $217:7=31$	<u>-31</u>
» գիւղէն վեր գացողները	186

Պ. 186 հոգի էին:

402. Բոլոր հացն է $80 \times 450 = 36000$ հաց. մէկ հացը
300 տրամիլինելով կ'ընէ $36000 \times 300 = 10800000$ տրամ,
զոր սպառներ են 4 օրուան մէջ 18000 մարդիկ. մէկ օր-
ուան մէջ սպառներ են $10800000:4=2700000$ տրամ. և
մէկ մարդը սպառներ է $2700000:18000=150$.

Պ. 150 տրամ է մէկ մարդուն ռոճիկը:

403. Իւրաքանչիւր անհատ օրը 252 տրամ ուտելով
5 օրը պիտի ուտէ $252 \times 5 = 1260$ տրամ, և 7040 մար-
դիկ կ'ուտեն՝ $1260 \times 7040 = 8870400$ տրամ. զոր 320 ուղ-
բածներով կ'իմանամք թէ $8870400:320=27720$ հաց
կ'ընէ, որն որ 66 սայլով տարուեր է, ուրեմն մէկ սայ-
լին մէջ դրուեր է $27720:66=420$ հաց.

Պ. 420 հաց կար մէկ սայլին մէջ:

404. Մէկ հացին ծանրութիւնն է 250 տրմ, 480 հացը կընէ $480 \times 250 = 120000$ տրմ. որ է մէկ սայլին մէջ եղածը. 60 սայլը $= 120000 \times 60 = 7200000$ տրամ. զոր կերեր են 10000 մարդիկ օրական 180 տրմ, ուտելով, ուրեմն կը բաւէ,

$$\frac{7200000}{10000 \times 180} = 4 \text{ օր.}$$

Պ. 4 օրուան համար:

405. Պ. 55 սայլ պէտք է:

406. Պ. 10500 մարդէ բաղկացեալ էր բանակը:

407. Պ. 374 տրամ էր մէկ հացին ծանրութիւնը:

408. Պ. 2 ուլ բաժանական 160. 9130. 7006. 5106. 5610. 1006.

3 ուլ » 705. 5106. 5610. 1005.

5 ուլ » 160. 705. 9130. 5610. 1005. 7105.

409. Պ. 4 ուլ բաժանական 1000. 732. 1316. 9000. 8112.

25 ուլ » 1000. 3025. 4050. 7075. 9000.

410. Պ. 6 ուլ բաժանական 9000. 5040. 612. 5054. 4104.

8 ուլ » 9000. 7120. 5040. 1504. 4104.

9 ուլ » 9000. 5040. 612. 2601. 4104.

411. Պ. Բաժանական են 54040. 137137.

» » չէ 17480.

412. Պ. Մնացորդք 4. 6. 4.

413. Պ. Բաժանական են 345543. 5005.

» » չեն 10004՝ որ 2 մնացորդ կուտայ, և 62710՝ որ 10 մնացորդ կուտայ:

414. Պ. 9000 ը 72 ուլ բաժանական է. վասն զի 72 ին երկու առ իրեարս նախնական արտադրիչներով 8 ուլ և 9 ուլ ճիշդ կը բաժնուի:

415. Պ. 18018 ը 99 ուլ բաժանական է. վասն զի աջ կողմէն երկուքական դասերու բաժնելով կը լինի 1,80, 18, որոց դումարն է $1+80+18=99$, որ կը բաժնուի:

416. Պ. Մեծագոյն հասարակ բաժանարարը 14 է:

417. Պ. 7 է մեծագոյն հասարակ բաժանարարը:

418. Պ. 20 է:

419. Պ. 11 է:

420. Պ. Քանի որ յիրեարս նախնական են, ուրեմն 1 է իրենց մեծագոյն հասարակ բաժանարարը:

421. Պ. 12 է:

422. Պ. 12 է:

423. Եթէ 29 ը բաժնելով 5 մնացորդ կ'ենէ, ուրեմն $29-5=24$ ը բաժնելով մնացորդ չենէր. նոյնպէս եթէ 22 ը բաժնելով 4 մնացորդ կ'ենէ, $22-4=18$ ը ճշդիւ կը բաժնուի. արդ 24 ին և 18 ին մեծագոյն հասարակ բաժանարարը կը պահանջուի:

Պ. 6 է:

424. Պ. 15 է:

425. Պ. 35 է:

426. Պ. Յիրեարս նախնական չեն, իրենց մեծագոյն հասարակ բաժանարարն է 27:

427. Պ. 55 է:

428. Պ. 26 է:

429. Մեծագոյն հասարակ բաժանարարը կամ վերջին բաժանարարն է 9, որովհետեւ վերջին քանորդը 2 է, ուրեմն երկրորդ բաժանարարն է $2 \times 9 = 18$, որովհետեւ երկրորդ բաժանարարն է 18, երկրորդ քանորդ 3, ու-

րեմն Δ ռաջին բաժանարարն կամ փոքր թիւն է, $3 \times 18 + 9 = 63$. և միւս թիւը՝ որովհետեւ Δ ռաջին քանորդն է 1. ուրեմն մեծ թիւն $\omega = 1 \times 63 + 18 = 81$.

Պ. Երկու թիւերն են 81 և 63.

430. Պ. 1. 2. 4. 5. 7. 8 թիւերն են.

431. Պ. 1. 2. 3. 5. 7 թիւերն են.

432. Պ. 1. 5. 7. 11 թիւերն են.

433. Պ. 1. 2. 3. 5. 7. 11 թիւերն են.

434. Պ. 300 ին բաժանարարներն են 1. 2. 3. 4. 5. 6. 10. 12. 15. 20. 25. 30. 50. 60. 75. 100. 150. 300.

435. Պ. 1500 ը 24 հատ բաժանարար ունի.

436. Պ. 49 թիւերով կը բաժնուի.

437. Պ. Երկուքն ալ 12 ական բաժանարարներ ունին.

438. Պ. 720 ը աւելի բաժանարար ունի. 720 ին բաժանարարներն 30 են. 2000 ին բաժանարարներն 20 են.

439. Պ. 160 ը 48 ով բաժանական չէ, վասն զի 6 և 8 յիբեարս նախնական չեն.

440. Այդ երկու թուոց մեծագոյն հասարակ բաժանարարին բաժանարարներն երկու թուոց ալ հասարակ բաժանարար են. մեծագոյն հաս. բաժանարարն է 90, որոյ բաժանարարներն են,

Պ. 1. 2. 3. 5. 6. 9. 10. 15. 18. 30. 45. 90.

441. Նախ երեք թուոց մեծագոյն հասարակ բաժանարարը կը գտնեմք որ է 120, որոյ բաժանարարներն են.

Պ. 1. 2. 3. 4. 5. 6. 8. 10. 12. 15. 20. 24. 30. 40. 60. 120.

442. 1000 ին նախնական արտադրիչներն են 2 և 5. ուրեմն զոյգ թիւ մը չկրնար 1000 ին հետ նախնական

լինիլ, և յայտնի է որ 500 զոյգ թիւ կայ, ուստի հանեմք 500 ը 1000 էն կը մնայ $1000 - 500 = 500$ տարազոյգ թիւեր. դարձեալ յայտնի է որ 5ի բազմապատիկներն ալ չեն կրնար նախնական լինիլ 1000 ի հետ, 500 ի մէջ $500 : 5 = 100$ հատ 5 ով բաժանական թիւեր կան զոր կը հանեմք 500 էն. $500 - 100 = 400$,

դ. 400 հատ:

